ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հունիսի 2016 թվականի N51-Ա

ԷԴԳԱՐ ԺՈՐԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԽԼԱԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ախլաթյանի և Դարբասի համայնքների ղեկավարների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, համայնքների ղեկավարների արտահերթ ընտրություններ նշանակելու, անցկացնելու և ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N1555-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N501-Ն որոշման և Էդգար Ժորայի Հակոբյանի անձնական դիմումի, որոշում եմ՝

1. Էդգար Ժորայի Հակոբյանին 2016 թվականի հունիսի 3-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ախլաթյան համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև արտահերթ ընտրության արդյունքում սահմանված կարգով Ախլաթյան համայնքի նորընտիր ղեկավարի կողմից իր պարտականությունների ստանձնումը.
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. Հունիս 2
ք. Կապան